

առնել և պահել. ապա ո՛վ որ այս գրածներուս անհը-
նազանդ կը գըտնվի՝ հոգևով և մարմնով դատապար-
տութեան ներքև կանկանի:

Ն. Ծ. Յովհաննէս
արք եպիսկոպոս
Կարմիր Վանից:

Ի 1822 ամի Տեառն.

փետրվարի ա

Ի Կարմիր վանս սուրբ

Աստուածածնի:

ԺԸ ԴԱՐՈՒ ԿՏԱԿ ԹԻՓԼԻՋԻ ՀՍՅ ՔԱՀԱՆՍ- ՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Կտակ անելու սովորութիւնը շատ հին է մեր մէջ. մեր
նշանաւոր վանքերի արձանագրութիւնների մեծ մասը կտակնե-
րի վաւերագիրներ են, որոնցով մէկը իւր տունն է նուիրում
և կեդեցուն և նորա պաշտօնեաներին, միւսը ջրաղացը, ուրիշը
լուսագին, ձէթ, խունկ ու մոմ և այլն. հին ժամանակն էլ այս-
պէս էր հասկացուում բարեգործութիւնը, որ ամբողջապէս կրօ-
նի շուրջն էր ամփոփուում:

Արդարև այդ տեսակ բազմաթիւ կտակներ կային և կան
այսօր իսկ շատ տեղեր. բայց այս օրերս մեր ձեռքն ընկաւ մի կտա-
կի պատճէն, որ իւր տեսակի մէջ եթէ չենք սխալուում առա-
ջինն է և չէ պատահած տարեգրութեան մէջ. այդ կտակը հե-
տեւեալն է.

Թիֆլիսի Հաւարար քաղաքամասում գտնուած Խօջի-վան-
քի հանգստարանը նուիրող և եկեղեցին շինող Խօջաբնհրուդի
թոռնորդի Մէլլք աղայն իւր եղբայր Ստեփաննոսի հետ միասին
1745 թուին կազմում են մի կտակ, որով իրաւունք է տըր-
ւում քաղաքիս տասն եկեղեցիների և Խօջիվանքի քահանանե-
րից նոցա, որոնք շաբաթ և կիրակի պատարագ պիտի մատու-
ցանեն, ուրբաթ օրը գնալ իրանց (Խօջի) բաղանիքը և լուս-
ցուիլ անվարձ, լուացուելուց յետոյ ստանալով բաղանիքի դրա-
մարկղից 100 դեան. այդ արտօնութեանց փոխարէն կտակող-

ները պարտք են դնում յիշեալ միաբանների վերայ յիշտակել իրանց ննջեցեալներն ու կենդանիները կտակում որոշուած ձևով և այս, ասումէ կտակը, «կացցէ սահման մշտնջենական անջնջելի» և ով յետնորդներից կամենայ քակել այս ուխտը՝ այսքան հողիներին պարտական մնայ Քրիստոսի անեղ դատաստանին:

Ամենից հետաքրքրականն է կտակի յաւելուածը, որ արել են նոյն բաղանիքի «գալաքները» իրանց կնիքների վաւերացուցմամբ. նոքա ասում են, որ իրանք էլ—միաբան դալաքները իրանց յօժարութեամբ յանձն են առնում ուրբաթ օրերը ժամարար քահանաների լուացուելիս սպասաւորել առանց դրամի: Ահա և կտակի պատճէնը.—

«Այս Բէթլահէմունն է

»Շնորհիւն ամենազօրին Աստուծոյ Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ և ողորմութեամբ նորին թուին Հայոց ռճղդ նոյեմբերի Ա ի թիֆլիզեցի Մէլիք աղայ Հանդերձ Հարազատ եղբարբ իմով Ստեփաննոսիւ որդի Մէլիք Աշխարհբէկին որդւոյ Խօջազազային որդւոյ Խօջաբէհրուդին զայս մշտնջենական ուխտս եդի ընդ Թիֆլիզու բոլոր եկեղեցեացն. այսինքն է ընդ վանքին ընդ քամայինց եկեղեցւոյն ընդ սուրբ նշանին ընդ ջգրաշինոյն ընդ նորաշինոյն ընդ մօղնոյն ընդ բեդլեհէմունն ընդ սհակաշէնունն ընդ քարափի եկեղեցւոյն ընդ կուսանաց վանից և հուլաբարու մեր եկեղիցւոյն՝ զայս պայմանաւ ով ոք վերոյ յիշեալ եկեղեցեացն շաբաթ և կիրակի ժամարար լինի՝ ուրբաթ առուրն երթալ ի մեր բաղանիսն և լուացուի թարց դրամի և ետ յուացմանն ճ դեան ևս առցէ բաղանեաց դախլէն՝ շաբաթ և կիրակի զմեզ և զմեր ննջեցեալսն յեշեսցէ՝ առաջի զենման անմահ գառին աստուծոյ և եղաք զայս կարգս, զի վանքի եկեղեցին և հաւլաբարուն, յիշեսցին զմեծ հաւն իմ զխօջաբէհրուդն հանդերձ կողակցաւ իւրով. ի սուրբ նշանն և ի մօղնու եկեղեցին յիշեսցին զպապն իմ զխօջազազայն հանդերձ կողակցաւ իւրով, ի նորաշէն և ի

Վուսանաց եկեղեցին յիշեսցին զհայրն իմ Մէլիք աշխարհէկն հանդերձ մարբն իմով, ի բեթլահէմու և ի քամօյինց եկեղեցին յիշեսցին զեղբայրն իմ զբէհրուղն հանդերձ կողակցաւ իւրով, ի ջգրաշէնու և ի քարափի եկեղեցին յիշեսցին զիս և զկողակիցս իմ, ի սհակաշէնու եկեղեցին յիշեսցին զեղբայրն իմ Ստեփանն հանդերձ կողակցաւ իւրով, և զայս կացէ սահման մշտնջենական անջնջելի. վասն որոյ աղաչեմ յետագայիցդ մեր ազգաց մի ոք ձեռնամուխ լինիլ քակելոյ հոգեւոր ուխտադրութեանս, զի և դուք առջիք վաստակոց ձերոց մասն, իսկ եթէ ոք կամիցի քակել զուխտս մեր, ինքն լիցի պարտական դայսքան հոգւոցն առաջի ահեղ ատենին Քրիստոսի եւ մեք լիցուք անպարտք, վասն զի յօժարութեամբ մերով եղաք ուխտս զայս եւ զրել ետուք ի զիրս յիշատակաց եւ կնքեցաք

կնիք

կնիք

դարձեալ մեք եւս խօջի բաղնըսի միաբան դայաքներս մեր յօժարութեամբ ուրբաթի յաւուրն ժամարար քահանայքն որ լուացուին մեք ևս սպասաւորեսցեմք ի փառս Աստուծոյ առանց դրամի

կնիք

կնիք

կնիք

կնիք

հանդերձ կնքօք.

սորին նախատիպն տեսանելով համեմատ նմին արտագրեցի Իգնատիոս տէր Ստեփաննոսեան տէր մխիթարեայ սպասաւորչացն բեթլէհէմու սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ. որ և գրեցաւ 1813 եւ յամսոջ 5 ՚ի մայրաքաղաքն Փայտակարան՝

Թէ որքան ժամանակ կտակից յետոյ օգտուեցին Թիֆլիսի քահանաները այս շնորհից՝ յայտնի չէ մեզ. լսել ենք ձերունի քահանաներից, որ մինչև ներկայ դարու սկզբները կտակի իսկականը պահուելիս է եղել Թիֆլիսի կօնսիստորիայում, իսկ վաւերացրած պատճէները յիշեալ 11 եկեղեցիներում: Մեր հրատարակածը Բեթղհէմ եկեղեցու պատճէնիցն է: